ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի հունվարի 15-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»**

Էջմիածնի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռք բերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 15.01.2021 թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 15.01.2021թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

Խնդրում եմ տալ պարզաբանում **«ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»** ծածկագրով գնանշման հայտի վերաբերյալ առաջացած ներքոնշյալ հարցի վերաբերյալ՝

Նշել եք, որ Ձեզ հարկավոր է A4 ձևաչափի թուղթ հետևյալ պարամետրերով՝

Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու, գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210*297 մմ, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80 գ/մ2: Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը՝ 2,5 կգ: Double A կամ համարժեք:

Դուք նշել եք, որ ձեզ հարկավոր է A4 ձևաչափի A դասի թուղթ՝ սպիտակությունը ոչ պակաս, քան 90 %: Թղթի սպիտակությունը գնահատվում է հիմնականում CIE համակարգով: Օրինակ A դասի թուղթը ունի 163 CIE-ից բարձր (մինչև 175CIE սպիտակություն): Հետևաբար խնդրում եմ պարզաբանել «սպիտակությունը ոչ պակաս, քան 90 %» պարամետրը՝ CIE գնահատման համակարգով, ո՞ր արժեքին է համապատասխանում և նշեք Double A թղթի պարամետրերը:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից:

Ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում եմ, որ **«ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում՝ մասնավորապես A4 ֆորմատի թղթի տեխնիկական բնութագրում չկա պահանջ Ձեր կողմից նշված CIE համակարգի վերաբերյալ, ուստի վերջինիս մասով պահանջ լինել չի կարող: Նշեմ նաև, որ հանձնաժողովը չի կարող պարզաբանել թե արդյոք «սպիտակությունը ոչ պակաս, քան 90 %» չափորոշիչը CIE համակարգի որ արժեքին է համապատասխանում:

Ձեր կողմից հայտը նախապատրաստելիս խնդրում եմ առաջնորդվել հրավերի տեխնիկական բնութագրում նշված չափորոշիչներով, այն չափորոշիչները, որոնք հրավերում չկան, կարող են առաջարկվել Ձեր կողմից:

Double A թղթի տեխնիկական բնութագրերն են. Թուղթ A4 ֆորմատի, սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու, գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210*297 մմ, խտությունը 80 գ/մ^2, փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով, յուրաքանչյուրում 500 թերթ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ԱՄԷՀ ԳՀԱՊՁԲ 21/3» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լուսինե Քալաշյանին:

Հեռախոս **0231/53663/520**
Էլ. փոստ **fingnum@mail.ru**
Պատվիրատու՝ **Էջմիածնի համայնքապետարան**